Եւ նոյն օրն էլ հեռացան։ Փախչողների մէջ էին, բացի Շահումեանից, և մի շարք ուրիշ հայ կոմունիստներ՝ Սմբ. Մարգարեանը, Արտ. Կարինեանը, Գ. Ղորղանեանը, Ս. Տէր-Գաբրիէլեանը, Աշ. Յովհաննիսեանը և ուրիշներ։

Բոլշեւիկների փախուստից յետոյ ստեղծուեց նոր իշխանութիւն — Բագուի դիկտատուրան, որի մէջ մտան սոց.-յեղափ. Վելունցն ու Լ. Ումանսկին, դաշն. Ալ. Առաքելեանն ու Ս. Մելիք-Եօլչեանը և 3 նաւաստիներ կասպից նաւատորմիղից։ Դիկտատուրայի առաջին գործը եղաւ ռազմանաւեր ուղարկել ու յետ բերել փախստական բոլշեւիկներին և նրանց տարած աւարը, որը և կատարուեց յաջողութեամբ. նաւերը վերադարձուեցին և բոլշեւիկները բանտարկուեցին. նրանց դէմ յարուցուեց դատական հետապնդում։

Դիկտատուրայի գլխաւոր մտահոգութիւնը, սակայն, ճակատն էր, ուր դրութիւնը օր օրի վրա վատանում էր։ Պատերազմի ծանրութիւնը առանձնապէս ընկած էր հայերի և մանաւանդ, Հ. Յ. Դաշնակցութեան վրա, որ լարել էր ուժերը ճակատը պահելու համար։ Յուլիս 30-ի գիշերւայ նիստում Հ.Յ.Դ. Բագուի Կենտր. Կոմիտէն քննեց ստեղծուած ահարկու կացութիւնը։ Ելք չէր գտնւում։ Նոյնիսկ Ռոստոմը, որ, սովորաբար, յուսահատուել չգիտէր, շւարել էր։ Ցանկարծ, պատմում է Ս. Մելիք-Եօլչեանը իր յուշերի մէջ,*) «դուռը բացուեց և սոց.-յեղ. Միքայէլ Տէր-Պողոսեանը ներս մտաւ՝ խնդրելու, որ Ռոստոմը դուրս գնայ։ Հարևան սենեակում Տէր-Պողոսեանը յանձնել էր Ռոստոմին Պարսկաստանի Էնզելի քաղաքից ստացուած նոր ռադիո-հեռագիրը, որով յայտնւում էր, թէ անգլիական հինգ հազարանոց մի զօրամաս այնտեղ պատրաստ է նաւեր նստելու և Բագուին օգնութեան հասնելու, եթէ միայն քաղաքը երկու օր պաշտպանուի և պահուի։ Ռոստոմը վերադարձաւ բոլորովին փոխուած։ Նա, կարծես, նորէն յարութիւն էր առել...»։

Հ.Ազգ.Խորհրդի ներկայացուցիչ Ս.Արարատեանի ջանքերի արդիւնքն էր այդ։ Հ. Ազգ. Խորհուրդը Արարատեանին ուղարկել էր Պարսկաստան՝ անգլիացիների հետ բանակցելու և Բագու բերելու համար։ Նրան յաջողուել էր համոզել անգլիական հրամանատարութեան՝ Բագու ուղարկել անգլիական զօրամասեր։ Այդ լուրն էր աւետում ռադիո-հեռագիրը, որ աներևակայելի ոգևորութիւն առաջ բերեց Բագուում։ Հ. Յ. Դաշնակցութիւնը մի յատուկ կոչով զօրակոչ յայտարարեց և ճակատ ուղարկեց մի քանի հազար կուռողներ։ Առաջաւոր դիրքերը գնացին և Մուրատն ու Սեպուհը, որոնք, յուլիսի վերջերին, Վոլգայի ափերից, հասել էին Բագու։ Եւ սկսուեց յամառ դիմադրութիւն։

Օգոստոս 2-ին թիւրքերը նորից անցան կատաղի յարձակման, այս անգամ Գայլի Դրունքի շրջանում, և յամառ կռիւներից յետոյ առաջացան մօտ 500 քայլ։ Յաջորդ օր, թնդանօթները որոտում էին ամբողջ ճակատի վրա։ Թիւրքական գրոհները իրար էին յաջորդում։ Բագուեցիները պաշտ-

---

բաց, իսկ դաշնակցականների հասցէին ուղղուած մեղադրանքը՝ ակներև զրպարտութիւն։ Պատմական փաստերը բոլորովին հակառակ դեր են վերագրում դաշնակցականներին ու բոլշեւիկներին։

*) «Հայրենիք», ամս., 1925թ. № 9, էջ 71.